

ի ձայն ողբոցն սկսան նուագել¹ զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւնն, զհնարս մահու նիւթել, զսպանումն, ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառելն գեղգեղեալ խանդաղատութեամբ: 59 Ի նուագել² իւրեանց ձայնիցն՝ իրքն յայտնեալ հռչակ հարկաներ: 60 Չոր իբրեւ լուաւ թագաւորն Արշակ, եւ եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր, ստորջացեալ ի միտ առնոյր զիրսն: 61 Ապա խաւսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գործեաց, ասէ. Վասն զի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց, զքսութիւն, զմահուն գոռութիւն զուր եւ տարապարտ. եւ զմեզ եւս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորուսանել, եւ զանհնարին չարիսն եւ զանեծս՝ որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառանգել:

62 Ապա իբրեւ հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, եւ ճշգրտէր զիրսն, խլիւլեալ անսայր բանին առ ժամանակ մի: 63 Իսկ իբրեւ զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղւոջն՝ յորում սպանաւն, եւ աւուրք հարուստ անցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն: 64 Կամ լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես՝ զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան: 65 Չոր իբրեւ լուեալ արքային, ասէ. Արդ հաստատ զիտեմ զոր լուայն թէ ստոյգ է. վասն կնոջն իւրոյ եղեւ մահն Գնելոյ: 66 Եւ անդէն արքայն մահ խորիւր, սպանանել զՏիրիթ եւս փոխանակ ընդ մահուն Գնելոյ: 67 Չոր իբրեւ լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ զիշերի փախստական լինէր: 68 Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրեւ հասցեն նմա, անդէն ի տեղւոջն սպանցեն: 69 Բազումք եւ քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացն. ի տեղւոջն՝ յորում հասանէին, անդէն զՏիրիթ սպանանէին:

70 Եւ յետ այսորիկ եառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն: 71 Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ, ասելով՝ թէ թաւ է մարմնով, եւ թուխ է գունով: 72 Ապա իբրեւ կինն ի նա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, եւ խնդրեաց եւծ անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր Նորա Ողոմայի: 73 Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, եւ նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. եւ կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմային, եւ խնդրէր սպանանել զնա: 74 Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, եւ

1 Օրինակ մի յաւելու՝ իբրեւ զխաղ

2 Յոր. նուաճել